ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

No 52

« 17 » մայիս 2017 թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնք,
Հասցե՝ 1փողոց 17

pambak.lori@mta.gov.am

Հ՝ 098-86-93-09

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ի լրումն մեր N36 և N47 գրության , կրկին անգամ ուղարկում եմ Փամբակ համայնքի ղեկավարի թիվ 10 , 11 և 12 որոշումները:

Առդիր 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Լ. Ուլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» Մարտի 2017 թվականի N 10

06-107-0019-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12/08/2010թ թիվ 1004-Ն որոշմամբ, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով և ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Փամբակ համայնքի 06-107-0019-0009 ծածկագրի տակ գտնվող 0.07059 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Լադիկ Վարազդատի Տոնոյանի / ծնված 07/11/1952թ / սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
4. Ճանաչել 06-107-0019-0009 ծածկագրի տակ գտնվող 0.07059 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1989 թվականին կառուցված 53.06 քմ բնակելի տան նկատմամբ Լադիկ Վարազդատի Տոնոյանի / ծնված 07/11/1952թ / սեփականության իրավունքը:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Հողամասի վրա առկա է 2015 թվականին ինքնակամ կառուցված 39.08 քմ անասնաշենք և 3.3 քմ ծածկարան:
7. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Փամբակ համայնք, 2 փողոց, 11 բնակելի տուն:

Համայնքի ղեկավար՝ **Ս. Ուլիխանյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գ. Փամբակ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 19>> << 04>> 2017 թվականի N 12

06-0107-0019-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լ. Տոնոյանի դիմումը, Արտյոմ Սաքանյան գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի հոդվածներով, 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Փամբակ համայնքում գտնվող 06-0107-0019-0009 ծածկագրի տակ գտնվող 0.07059հա հողամասի և բնակելի տան համար 31.01.2003թ. ներկայացված տնտեսությունների գրքից քաղվածքը ճանաչել անվավեր:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

« 27 » ապրիլ 2017 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 12

ՆԵԿՏԱՐԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ
<<ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵԱՆՔՈՎ ԱՆՕԹԵԱՆ
ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՀԵՐԹԱՑՈՒՑԱԿ>> - ԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի <<Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման , բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին>> թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի 1 ենթակետով , <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով , ի նկատի ունենալով , որ Նեկտարինե Մելքոնյանը ստացել է համապատասխան աջակցություն՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Նեկտարինե Մելքոնյանին հանել հաշվառման հերթացուցակից:

Համայնքի ղեկավար՝ Ս. Լ. Ոլիխանյան

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
07300746